


ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՀԵՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

6420

ՖԻԶԻԿԱ
ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2

ԲԻBLIOOTEKA
MNSTITUTA
FIZICO-TEKHNICHESKICH
Nauk
S.S.R.

Կազմեց Գ. Ա. ՄԻՐՈԽՅԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿԱՂԱԿԱ»
ԱՊՍԱՎ-ԴՐԵ

1932

15 FEB 2013

6420

CA 553

19 AUG 2006

20 JUL 2010
Института
Природы и Денежной
Науки
Академии Наук
СССР

ՄԵԽԱՆԻԿԱ

1. ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՑԱՐՁԱԿ ՄԻՍՏԵՄ

Ֆիզիկայի առաջադրությունը կատարելիս պետք է նկատի ունենալ հետեւյալը. Փիզիկան փորձնական գիտություն եւ նրա որենքներն ու ճշմարտությունները հիմնված են փորձերի վրա. Այդ գիտությունն յուրացվում է լաբարատոր փորձերի ճանապարհով: Հեռակա ուսուցման ժամանակ նման մեթոդի կիրառումը հնարավոր չե, ուստի, զորպեսզի գոնե այդ առարկայի յուրացման բացերն ըստ հնարավորության քեզ լինեն, պետք եւ աշխատանքը տանել հետեւյալ ձեռվ.

Առաջադրությունը սովորել գլուխ առ զլուխ. ձեռքի տակ տեղոր ունենալ. Նախ ուշադրությամբ կարդալ ապա յերկրորդ անգամ կարդալու ժամանակ համառոտ կոնստիլուց կազմել, ընդհեռվ որենքներն ու ճշմարտությունները: Այդ զիսում արևած հարցերին պատասխանել գրավոր, մանրամասն բացատրություններով:

Յեթե առաջադրված են փորձեր, վորոնք կարելի յերականացնել ձեր պայմաններում, ապա պետք եւ կատարել այդ փորձերը և արդյունքները զբի առնել:

Լուծել բոլոր առաջադրված չնոդիրները, դժվարները փորձել մի քանի անգամ և չհասկանալու դեպքում՝ պահանջել զրանց բացատրությունը: Տվյալ գլխի վերջում առաջադրված սոսուգողական հարցերին պատասխանել գրավոր և մաքուր գրած տետրակն ուղարկել զասատու ուսուցչին: Յեթե ամբողջ առաջադրությունը միանգամից հնարավոր չե պատրաստել կարելի յե 2—3 մասի բաժանել և պատասխանը 2—3 տետրով ուղարկել:

Մեխանիկան ուսումնասիրելիս նախ անհրաժեշտ է իմաստը, թե ինչպես են ընտրված այն ֆիզիկական մեծությունների միավորները, վորոնք գործածվում են այդ գիտությունն ուսումնասիրելիս:

Ֆիզիկայի զարգացման ընթացքում, ուսումնասիրության յենթակա յուրաքանչյուր մեծության համար չափի միավորն ընտրված չի յեղել այնպիս, վոր նա կապված լինի իրենից առաջ ուսումնասիրված մեծության միավորի հետո: Սակայն հետո, յերբ այդ միավորների թիվը մեծացել ե, կարիք ե զգացվել այդ բոլորը մի վորոշ սիստեմի բերել: Միավորների այդ սիստեմը, վորտեղ յերեքը նրանցից ընտրված են կամավոր, իսկ մյուսները դուրս են բերվել այդ յերեքից—ընության որենքների հիման վրա, կոչվում ե միավորների բացարձակ սիստեմ, վորտեղ կամավոր ընտրած միավորները կոչվում են հիմնական միավորներ, իսկ մյուսները—այդ յերեքի ածանցներ:

Բացարձակ սիստեմի հիմնական միավորներն են՝ Յերկարության միավոր—1 cm (centimetr): Զանգվածի կամ մասսայի միավոր—1 gr (gramm): Ժամանակի միավոր—1 sec (secunda)= $\frac{1}{86400}$ մի-

շին արեգակնային որվա:

Չափի միավորների այս սիստեմը կոչվում է CGS (g, kg, m) սիստեմ:

Տեխնիկայի մեջ գործածվում եւ միավորների այլ սիստեմ, վորի հիմնական միավորն եւ՝

Ցերկառության միավոր—մեկ մետր (1 m)—(metr). Ուժի միավոր—մեկ կիլոգրամ (1 kg)—(kilogram).

Ժամանակի միավոր—1 վայրկյան (1 sec—second):

Սա կոչվում եւ չափի միավորների տեխնիկական սիստեմ: Խնդիրները լուծելիս պետք եւ ուշադրություն դարձնել վոր խնդիրների մեջ առաջադրված մեծություններն արտահայտված լինել: Միևնույն սիստեմի միավորներով:

2. ՀԱՎԱՍԱՐԱԳԱՓ ՅԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐԱԳԱՓ ՇԱԲ- ԺՈՒՄՆԵՐ

17-րդ դարում իտալացի գիտնական Գալիլեյը և անգլիացի մեծ մաթեմատիկոս և ֆիզիկոս Բոսհակ Նյուտոնը գտան մեխանիկայի յերեք հիմնական որենքներն, ըստ վորում՝ Գալիլեյը գտավ առաջին յերկուսը, իսկ Նյուտոնը՝ յերրորդը:

Նախ Գալիլեյը գտավ իներցիայի որենքը, այսինքն՝ մարմինների այն հատկությունը, վորի շնորհիվ նրանք պահպանում են իրենց հանդիսատ դրությունը և կամ թե ուղղագիծ ու հավասարաչափ շարժումը: Սա մեխանիկայի առաջին որենքն է:

Այդ որենքը հասկանալու համար նախ պետք եւ պարզել, թե իսպիսի շարժում և ուղղագիծ և հավասարաչափ շարժումը:

Նարժումը կոչվում եւ հավասարաչափ, յեթե մարմինը ժամանակի յուրաքանչյուր միավորի ընթացքում անցնում եւ հավասարաչափ հանապարհ, իսկ յեթե անհավասար հանապարհ եւ անցնում, այդպիսի շարժումը:

Վորպես հաստատուեն հավասարաչափ շարժման որինակ, կարող ենք վերցնել յերկրի շարժումն իր առանցքի շուրջը. նմանապես առանձին դեպքում, յերբ ձգող ույժը հավասարվում է զիմաղրող ույժերին, կարելի յետել, վոր զանազան շարժիչ մեխանիզմներն են շարժումն են հավասարաչափ, ինչպիսին են՝ շոգեմեքենան, ավտոն, ոդանավը և այլն:

Վորպես անհավասարաչափ շարժման որինակներ կարելի յե վերցնել կայարանին մոտեցող կամ նրանից հեռացող շոգեգնացքի շարժումը, ընկնող մարմնի շարժումը, տատանափող ճոճանակի շարժումը և այլն:

Մտածեցնք և զրի առեք հավասարաչափ և անհավասարաչափ շարժման որինակներ:

3. ՈՒՂՂԱԳԻԾ ՅԵՎ ԿՈՐԱԳԻԾ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Նարժումներն ըստ անցած հանապարհի ձեվիք՝ լինում են ուղղագիծ յեվ կորագիծ:

Շարժումը կոչվում եւ ուղղագիծ, յեթե այդ շարժումը՝ կատարող մարմնի վորեն կետի անցած ճանապահը ներկայացնում է ուղիղ զիծ, իսկ յեթե այդ ճանապահը մի վորեն կոր զիծ եւ ներկայացնում, այդպիսի շարժումը կոչվում է կորագիծ շարժում: Շարժվող կետի ճանապահագիծը կոչվում է տրայեկտորիա: Յերբ խոսում ենք թե կետի, այլ վորեն մարմնի շարժման մասին, նկատի չառներով նրա մեծությունը, ապա նրա շարժումը կոչում ենք համերիաց շարժում, յեթե նրա վորեն յերկու կետերի միացնող ուղիղը շարժման ընթացքում միշտ ել ինքն իրեն զուգահեռ և մնում, իսկ յեթե նրա կետերը շարժման ժամանակ համակենտրոն շրջաններ են գծում, այդպիսի շարժումը կոչվում է պտական շարժում:

Ի՞նչպիսի շարժում է ժամանակուցի ուաքի շարժումը, թափանիվի շարժումը, սրաքարի շարժումը, ուղիղ

ճանապարհով ընթացող սահնակի, կառքի և ավտոյի շարժումը:

Բերեք մի քանի շարժումների որինակներ և նշեցեք, թե ինչպիսի շարժումներ են նրանք:

4. ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԶԱՓՈԽՄԸ

Յեթե դիտենք նույն յերկաթուղու ճանապարհով դնացող փոստատար, մարդատար, արագնթաց և ապրանքատար գնացքների հավասարաշափ շարժումները, կնկատենք, վոր-նրանց շարժումները միմիանցից տարբերվում են, չնայած բոլորն ել շարժվում են ուղղափիծ և հավասարաշափ: Այդ տարբերությունը կայանում է նրանում, վոր նրանք միմնույն ճանապարհն անցնում են տարբեր ժամանակամիջոցում, կամ միմնույն ժամանակամիջոցում անցնում են տարբեր յերկարության ճանապարհներ: Շարժումը բնորոշելիս բավական չեւ առանձին—առանձին իմանալ ճանապարհի յերկարությունը կամ ժամանակը, այլ պիտի իմանալ ճանապարհի և ժամանակի միջև յեզած կապակցությունը, այսինքն՝ պետք եւ գործածության մեջ մտցնել սոր ֆիզիկական մեծություն, այսպես կոչված արագության գալափարը: Հավասարաշափ շարժման արագությունը չափվում է ժամանակի մեկ միավորի ընթացքում անցած ճանապարհով: Յեթե մարմինը, հավասարաշափ շարժվելով, 10 վայրկյանում անցնում է 50 սմ, նրա արագությունը վորոշելու համար պետք է իմանալ, թե 1 վայրկյանում վորքան ճանապարհ է անցնում:

Մեր ասածներից յերկում ե, վոր հավասարաշափ շարժման արագությունը հաստատուն մեծություն ե, իսկ անհավասարաշափ շարժման արագությունը՝ փոփլական մեծություն:

5. ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄԸ

Հավասարաշափ շարժումով անցած ճանապարհը նշանակելով S , շարժման ժամանակամիջոցը՝ t , արագությունը՝ V , կասենք— $V = \frac{S}{t}$ ցույց եւ տալիս ժամանակի մեկ միավորի ընթացքում անցած ճանապարհն, իսկ ժամանակում անցած ճանապարհը կլինի— Vt :

Այսպիսով կունենանք հետևյալ հավասարումները՝

$$V = \text{հասարուն մեծության} \quad \dots(1)$$
$$S = V \cdot t$$

Սրանք կապում են շարժումը բնորոշող յերեք մեծությունները միմիանց հետ և կոչվում են հավասարաշափ շարժման հավասարումներ:

Բառերով արտահայտեցեք և զրի պաեք տետրում այդ յերկու հավասարումները:

Վորոհեալ $S = V \cdot t$ հավասարման մեջ մասնակցում են յերեք մեծություններ, ուստի այդ հավասարման միջոցով կարելի յեւ լուծել միայն յերեք ձեր խնդիրներ:

Խնդիրները լուծելիս պետք է բոլոր մեծություններն արտահայտել ընդունված միավորների միջոցով, ուստի նախ պետք է աշխատենք ընտրել արագության միավորները:

6. ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐ

Արագության միավորն ընտրելու համար պետք է (1) հավասարումից $V = \frac{S}{t}$ արտահայտենք $S \cdot t$ -ի և t -ի միջոցով. $V = \frac{S}{t}$ այդ հավասարումից յերկում ե, վոր $V = \frac{S}{t}$ մեկ միավոր արժեքը կոտանա այն ժամանակ, յեթե $S = t$ է էն նույնպես ստանան մեկ միավոր արժեքներ.

այսպես, յեթե $S = 1 \text{ cm}$ $t = 1 \text{ sec}$, այն ժամանակ կունենանք՝

$$V = \frac{1 \text{ cm}}{1 \text{ sec}} = 1 \frac{\text{cm}}{\text{sec}}$$

Այսպիսով CGS սիստեմի մեջ վորպես արագության միավոր ընդունվում է այնպիսի հավասարաչափ շարժման արագությունը, վորի ընթացքում մարմինը մեկ վայրկյանում անցնում է 1 cm ճանապարհ։ Այդ միավորն առանձին անուն չունի, միայն նշանակվում է $\frac{\text{cm}}{\text{sec}}$ (կարգացվում է սանտիմետր սեկոնդային)։

Յեթե մարմինը 1 cm վայրկյանում անցնում է $7 \frac{\text{cm}}{\text{sec}}$ ՝ Յեթե 4 cm վայրկյանում անցնում է 36 cm , արագությունը կլինի — $\frac{36}{4} = 9 \frac{\text{cm}}{\text{sec}}$

Միավորների տեխնիկական սիստեմի մեջ վորպես արագության միավոր ընդունվում է այնպիսի հավասարաչափ շարժման արագությունը, վորի ժամանակ մարմինը մեկ վայրկյանում անցնում է 1 mt , այդ միավորը նշանակվում է $\frac{\text{mt}}{\text{sec}}$ (մետր սեկոնդային)։

Տրանսպորտում գործածվում է վորպես արագության միավոր $\frac{\text{km}}{\text{ժամ}}$ (կիլոմետր ժամային)։

Մովային ճանապարհորդության ժամանակ՝ $\frac{\text{ժամային}}{\text{ժամային}}$ ։

Հերթեր։

ա) Վո՞ր շարժումն է կոչվում ուղղագիծ, վորը՝ կորագիծ, վարը՝ համեթաց և վորը՝ պատական։ Համառոտակի բացատրել և գրել տետրում։

բ) Վո՞ր շարժումն է կոչվում հավասարաչափ և վորն անհավասարաչափ, և ինչ մեծություններ են նրանց արագությունները (համառոտ զրել տետրում)։

գ) Ինչո՞վ ե չափվում արագությունը։

դ) Վո՞րն է արագության միավորը։

ե) Ի՞նչպես ե գրվում հայկասարաշամի շարժման հավասարումը և ի՞նչ ե արտահայտում այն։ Այս հարցերին ես պատասխաննել գրավոր։

ԽՆԴԻՐՆԵՐ.

1. Վորոշել յերկրի հասարակածային վորեւ կետի որական արագությունը $1 \frac{\text{mt}}{\text{sec}}$ ճշտությամբ, յեթե յերկրի հասարակածային շառավիղը հավասար է 6378 km (Պատ. 464 $\frac{\text{mt}}{\text{sec}}$)։

Ծանօթուրյան.՝ Պատք և ոդավել $V = \frac{s}{t}$ հավասարությունից, նկատի առնելով, վոր հասարակածի վրա գտնված կետը մեկ որվա մեջ կատարում է մի լրիվ պտույտ, գծելով մի շրջանագիծ, իսկ շրջանագիծի յերկարությունը $S = 2\pi R$, վորակեղը $\pi = 3,14 \cdot \rho$, իսկ $R = 6378$ (շառավիղ)։

Ուզեմն հասարակածային կետի անցած ճանապարհը $24 \cdot \text{Ժամվա$ ր $\frac{\text{km}}{\text{ժամ}}$ ընթացքում հավասար է $2 \cdot 3 \cdot 14 \cdot 6378 \text{ km}$ ։

Զմոռանալ կիրոմթորը գարձնել մետրի, ժամեկը գարձնել վարկյանների, ապա կատարել գործողությունները։

2. Հետևակի արագությունը հավասար է $1,7 \frac{\text{m}}{\text{sec}}$ ։

Գտնել նրա մեկ ժամում անցած ճանապարհը (Պատ. $= 6,12 \text{ km}$)։

3. Ավտոյի ունկորպային (ամենամեծ) արագությունը հավասար է $228 \frac{\text{km}}{\text{sec}}$ ։


Գտնել 1 km անցնելու ժամանակամիջոցը (Պատ. $= 16 \text{ sec}$)։

4. Տրված է արագությունը $V = 3 \frac{\text{cm}}{\text{sec}}$ ։

Կառուցել արագության և ճանապարհի զրաֆիկը։

Ծանօթուրյան. Արագության և ճանապարհի զրաֆիկները կառուցելու պետք է ոդավել $S = V \cdot t$ ից։ Դրա համար վերց-

Նել յերկու փոխադարձ ուղղահայաց գծեր (գծ. 1), նրանց հատման կետը նշանակել Օ. ապա ՕՎ առանցքի վրա նշանակել ճանապարհը (S), իսկ ՕХ առանցքի վրա նշանակել ժամանակը



(է). այսուհետեւ $S = 3$ և հավասարման մեջ է-ին տալ հաջորդաբար $1, 2, 3, 4, 5, \dots$ արժեքները, S -ը կստանա $3 - 6 - 9 - 12 - 15 \dots$ արժեքները:

ՕХ առանցքի $1, 2, 3, 4, \dots$ կետերից կանգնեցնել ուղղահայաց գծեր, նույնպեսև ՕՎ-ի առանցքի $3, 6, 9, \dots, 12, 15$. կետերից տանել ուղղահայաց գծեր, վարուց հատման կետերը միացնելով ստանալ ՕԲС ուղեղ պիծը:

Այդ գծի և ՕԽ-ի առանցքի միջև կազմված անկյունը նշանակելով ձ, գտնել այդ անկյան տանգենսը (tgs), փոքր հավասար ե այդ անկյան դիմացի եջի և կից եջի հարաբերությանը:

Ցույց տալ, փոքր ստացված ՕԲ₁, ՕԲ₂, ՕԲ₃ և այլ յեռանկյունների մեջ tgs -ը նույն մեծությունն են ներկայացնում (ոգտվել այդ յեռանկյունների նմանությունից):

Սրա հիման վրա իմացեք, իբրո՞ք հավասարաչափ

շարժման արագությունը՝ $V =$ հաստատուն մեծության: Ճանապարհի գրաֆիկը կառուցելու համար ՕՎ առանցքի վրա վերցնել $V = 3\text{-ի}$, ապա $1, 2, 3, 4, \dots$ կետերից և ՕՎ-ի Յ-րդ կետից տանելով ուղղահայաց գծեր՝ ՕՎ և ՕХ առանցքներին, ցույց տալ, փոքր ստացված ուղղանկյունը քառանկյունների մակերեսներն արտահայտվում են $t = 1, 2, 3, 4, \dots$ ժամանակամիջոցներում Յ արագությամբ տեղի ունեցող շարժման ճանապարհը:

7. ԱՐԱԴՈՒԹՅԱՆ ՎԵԿՏՈՐ

Ոելսերի վրա դրված գնացքը կարող ե շարժվել յերկու հակառակ ուղղությամբ՝ առաջ և հետ:

Նմանապես ավտոն, ողանավը կարող են միշտ ել իրենց շարժումը կատարել տարբեր ուղղություններով: Այդ շարժումներից յուրաքանչյուրն ել կունենա իր արագությունը: Սակայն յեթե արագությունն արտահայտվի միայն թվերով, նարավորություն չի լինի միաժամանակ մատնանշել նրա շարժման ուղղությունները:

Ուրեմն արագության լրիվ պատկերն ստանալու համար պետք ե արքած լինի վոչ միայն նրա մեծությունը, այլ և նրա ուղղությունը:

Այն մեծությունները, վորոնի վարույթում են յերկու նշաններով՝ մեծությամբ լիվ ուղղությամբ, կաչվում են վեկտորներ կամ վեկտորական մեծություններ:

Արագությունը վեկտորական մեծություն ե (վեկտոր ե): Վորպեսզի $7 \frac{\text{m}}{\text{sec}}$ ալ արգությունը, փորն ուղղված ե աջից՝ զեպի ձախ, հորիզոնական ուղղությամբ պատկերացնել գծերի վրա (գծ. 2), պետք ե շարժման Օ կետից տանել մի հորիզոնական գիծ, ապա 1 մ-ի փոխարեն ընդունել 1 սմ և Օ կետից հաշվել այդ գծի վրա 4 սմ:

Այդպիսով ՕԲ ուղիղը գրաֆիկորեն կարտահայտի
7 cm
sec արագությունը:



ԳԾ. 2

Ուղղագիծ շարժման ժամանակ արագության ուղղությունը համընկնում է շարժման ուղղության հետ, ուստի հեշտությամբ կարելի յե գտնել: Սակայն խնդիրը բարդանում է, յերբ անհրաժեշտ է լինում գտնել կորագիծ շարժման արագությունը:

8. ԿՈՐԱԳԻԾ ՇԱՐԺՄԱՆ ԱՐԱԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱ-
ՅԱՍԻԱՆՈՒՄ Ե ՇԱՐԺՄԱՆ ԿԵՏԻՑ ՃԱՆԱՊԱՀԱԳԾԻՆ
ՏԱՐԱԾ ՇՈՇԱՓՈՂԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՆԸ.

Այդ հարցին ձիչո պատասխանելու համար նախ պատկերացնել, վոր շարժումը կատարվում է ABCD բեկյալ գծի ուղղությամբ (գծ. 3): Պարզ է, վոր շարժման ուղղությունը փոխվում է միայն բեկյալ գծի գագաթներում:

AB ճանապարհի վրա արագությունը կունենա AB ուղղությունը, վորի մեծությունը հավասար կլինի յենթագրենք ԲԲ, ին:

Բայց կարելի յե պատկերացնել նաև, վոր նրանից հետո շարժումը տեղի յե ունեցող բեկյալ գծով, այս դեպքում շարժումն ավելի մոտիկ կլինի կորագիծ շարժմանը: Բ կետում արագությունը AF ճանապարհի վրա կունենա ԲF ուղղությունը և հավասար կլինի ԲF, ին: Վորպեսզի ավելի մոտենալ խկական կորագիծ շարժմանը, պատկերացնել, վոր բեկյալ գծի կողմերի թիվն ա-

վելի ու ավելի շատանում է: Ամեն անգամ ել Բ կետում շարժման արագության ուղղությունը կհամապատասխանի կոր գծի Բ կետից տարած հատողի ուղղությանը: Յեվ, վերջապես, յեթե այդ բեկյալի կողմերն անուանմանորեն շատացվի, այն ժամանակ սահմանային



ԳԾ. 3

դիրքում Բ կետից տարած հատողը կդառնա կորի շոշափող, և արագությունը կունենա այդ շոշափողի ուղղությունը:

Այսպիսակ կորացիծ շարժման ժամանակ այդ գրծի յուրամանցուր կետում արագությունը կունենա սրվյալ կետից կոր գծին տարած շուափողի ուղղությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- Գծագրի վրա պատկերացնել ուղղագիծ գծով գեպի վեր տեղի ունեցող $10 \frac{\text{cm}}{\text{sec}}$ արագությունը:
- Գծագրի վրա պատկերացնել $5 \frac{\text{m}}{\text{sec}}$ արագությունն ուղղագիծ գծով գեպի վեր:

3. Գծագրի վրա պատկերացնել $0,4 \frac{\text{կմ}}{\text{sec}}$ արագությունը հորիզոնից 45° դեպի վեր տեղի ունեցող շարժման համար:

4. Տվյալ կոր գծի (գծ. 3) ABC կետերում կառուցել արագության ուղղությունը, յեթե շարժումը տեղի յեւ ունենում ձախից դեպի աջ:

ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՈՐԵՆՔԸ ԿԱՄ ԻՆԵՐՑԻԱՅԻ ՈՐԵՆՔԸ.

Բնության յերևույթների վրա կատարած դիտությունների միջոցով Գալիլեյը (1564—1642 թ.) դուրս բերեց մարմինների իներցիայի հատկություններ: Իսկ 1687 թվականին նյուտոնը «Նատուր ֆիլիսոփայության մաքենատիկական սկզբունքներ» աշխատության մեջ այդ հատկությունն արտահայտեց հետեւյալ որենքով՝ «յուրաքանչյուր մարմին շարունակում է պահպանել իր հանգիստ դրույթներ, կում ուղղագիծ յեվ հավասարաչափ շարժումը, մինչեվ վոր նրա վրա ազդում լիները չսիփեն փոխել այդ դրույթներ»:

Ինչ վերաբերում ե այդ որենքի առաջին մասին, այսինքն՝ հանգիստ դրության պահպաններուն, պետք ե ասել, զա միանդամայն հաստատվում ե մարդկային հազարավոր փորձերով և յուրաքանչյուր մարդու անհատական փորձի միջոցով: Իոչ վոր չի փոխել մինչեւ այժմ մարմնի հանգիստ դրությունից շարժման անցնելը՝ առանց արտաքին փորեւ ույժի ազդեցության:

Մարմնի ուղղագիծ շարժումը պահպաններու ձգտումը նույնպես կարելի յեւ դիտել ամենուրեք, որինակ սրաքարից առաջացած կայծերը (քարի շիկացած մասնիկները) առաջին մոմենտին թռչելով նրա դիսկի շոշափողի ուղղությամբ, շարունակում են շարժվել այն ուղղությամբ, ինչ ուղղություն վոր նրանք անցել են

քարից պոկվելու մոմենտին, քանի վոր նրանց վրա դադարել են ազդել հարակցական ույժերը, վորնք կարող ելին այդ մասնիկները շարժել շրջանաձև (բոցի շարժման ուղղությամբ):

Զի հեծած մարդը, յերբ ձին արագ թեքվում ե, ընկնում ե նրա վրայից նախկին ուղղագիծ շարժման ուղղությամբ:

Ինչ վերաբերում ե մարմնի հավասարաչափ շարժությունների մաքանակությանը, պետք ե ասել, վոր այդ հատկությունն անմիջապես չի կմրելի դիտել քանի վոր յերկրի մակերևույթի վրա յուրաքանչյուր շարժվող մարմին ի վերջո կանգ ե առնում, այսինքն՝ սկսում ե շարժվել անհավասարաչափ:

Սակայն միաժամանակ յերկրի մակերևույթի վրա յուրաքանչյուր մարմնի շարժման ժամանակ կարելի յեւ գտնել այնպիսի ույժեր, վորոնք, ազդելով շարժվող մարմնի վրա, պատճառ են դառնում նրանց հավասարաչափ շարժումն անհավասարաչափ շարժման վերածելու, ինչպես շփման ույժը, միջավայրի գիմազրության ույժը (ողի կամ ջրի), յերկրի ձգողական ույժը և այլն:

Յեթե այդ ույժերն զգալի չափով նվազում են, այն ժամանակ ներտառում ենք, վոր մարմնի շարժումն ավելի մոտենում ե ուղղագիծ հավասարաչափ շարժման, որինակ յերբ ճոճանակը շարժվում ե լավ նոսրացրած ողի մեջ, կամ զնդակը զլորվում ե լավ հղկված հատկի վրայով:

Սրանից կարելի յեւ յեզրակացնել վոր յեթե հետացնենք մարմնի վրայից նրա վրա ազդող բոլոր արտաքին ույժերի ներգործությունը, ապա նրա շարժումը բոլորովին կմոտենա հավասարաչափ շարժման:

Պետք ե ասել, վոր որենքի այս մասը չի կարելի դուրս բերել փորձնական ճանապարհով, քանի վոր յերկրի վրա նեարափոր չե շարժվող մարմինը դնել արտաքին ույժերի ազդեցությունից գուրա:

Բայց վերոպըրյալ դիտողությունները և իներցիայի որենքից գուրա բերվող մի շաք հետևանքները, այդ որենքը զնում են փորձնական հիմքերի վրա: Յերկնային մարմինների շարժումների մեջ կիրառելով, իներցիայի որենքն այսպիսի հետևանքներ ե տալիս, վորոնք միանգամայն հաստատվում են աստղաբաշխական դիտողությունների միջոցով:

Վոր մարմինները ձգտում են իրենց արագությունն
անփոփոխ պահելու, դա մենք պատահում ենք ամեն
քայլափոխում, որինակ՝

ա) Խնչո՞ւ համար գնացքի, տրամվայի և նավակի մեջ նստած մարդիկի, յերբ նրանց արագությունը զանդաղում ե, առաջ են թեքվում, կամ յերբ նրանք բախվում են վորեւ արգելքի, ստացած հարգածից միջի մարդիկ ցած են ընկնում (իսկ յերբ ճանապարհը ծուռ են, մարդիկ սեղմափում են ներսի պատերին):

բ) ինչո՞ւ շորի վրայից փոշին թափ տալիս փռումասնիկները պահպանում են շորի շարժման ուղղությունը, նույնիսկ նրա շարժումը դադարելուց հետո:

գ) Ինչո՞ւ, յերբ կենդանին ջրից դուրս ե գալիս,
իրեն մեկ անգամ թափահարելով կարողանում ե ազատ-
վել ջրի կաթիլներից. ի՞նչ ուզգությամբ են թռչում
ջրի կաթիլները:

Յերբ զնացքը շարժվելիս նրան ձգող ույժը հավասարվում է ռելիսերի ցույց տված դիմացրության ույժին, այս ժամանակ նաև շարժվում է հավասարաշահի:

Սա նշանակում, և վոր այդ յերկու հակառակ
ուղղված հավասար ուժերը միմիանց փոխա-
զարձաբար վոչնչացնում են, և իրականության
մեջ գոացքը շարժվում է իներցիայով, և շոգեկառքի
ձեռք բերած սկզբնական արագությունը պահպան-
վում ե:

Ըստհանրապես մարմնի հավասարաչափ շարժումը
հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ գոյն յերկու

Հակառակ և հավասար ազդող ուժինք միմիանց հավասարակշռում են:

Անձնական գիտողությունների և փորձերի միջոցով գտնել մի քանի որինակներ, զորտեղ յերևախանիկայի առաջին որենքը. նշել, թե ինչպես ե արտահայտում բերած որինակներում այդ որենքը և գրի առնել տետրերում:

ՀԱՐՑԵՐ.

ա) Ինչու համար արագ սլացող գնացքից իրեն
մասու ռեակի առաջ է ընկնում:

բ) Ինչո՞ւ զնացքը կամ տրամփայը կանգնելիս նը-
րանգ միջի մարդիկ ցնցվում են:

գ) Ինչու համար, Դեթե մի թերթ թղթի վրա մի վորեւ դրամ ենք դնում (Յ կամ Յ կոպեկանոց) և առագությամբ թուղթը քաշում ենք, դրամը մնում ե իր տեղում:


Ինքներդ կատարեցիք այդ փորձը (թուղթը դնել
սեղանի վրա և նրա վրա դնել դբամբ): Դիմել ար-
դյունքը և գրավոր պատասխանել տետրերում:

ԱՐԴԻՇՈՒՄ

Մեխանիկայի առաջին որենքից (վո՞րն եւ այդ որենքը, նորից վերհիշել) հետեւմ եւ, զոր յուրաքանչյուր արտաքին ազդող ույժը շարժվող մարմնի արագությունը փոխում է:

Սակայն տարբեր մարմինների արագությունների փոփոխությունը տեղի յե ունենում տարբեր ձևով։ Այսպես, կայարանից մեկնող մարդատար, փոստատար, ապրանքատար գնացքների, տրամվայի, ավտոլի արագությունները տարբեր ժամանակներում կարող են փոփոխվել զրոյից մինչև մի վարեկ մեծություն, որինակ մին

sh 20 $\frac{4L^S}{\text{time}}$:



Այսպիսով զանագան անհավասարաչափ շարժումներ միմիանցից տարբերվում են նրանով, վոր նրանց արագությունները տարբեր փոփոխություններ են կը-րում: Այդ հատկությունը բնորոշելու համար մտցնում են նոր մեծություն, վորը կոչվում է արագացու:

Արագացումը չափվում է արագության մեկ միավոր ժամանակում սեղի ունեցած փոփոխությամբ:

Յեթե շարժման սկզբնական արագությունն յեղել $b = 75 \frac{\text{cm}}{\text{sec}}$ և 1° վայրկանից հետո զարձել $b = 145 \frac{\text{cm}}{\text{sec}}$, ապա այդ անցած ժամանակվա ընթացքում միջին արագացումը հավասար կլինի $\frac{145 - 75}{10} = +7$ միավորի:

Յեթե սկզբնական արագությունը $75 \frac{\text{cm}}{\text{sec}}$ է, իսկ 20 վայրկանից հետո գառնում է $35 \frac{\text{cm}}{\text{sec}}$, այն ժամանակ միջին արագացումը այդ ժամանակվա ընթացքում կլի-նի $\frac{35 - 75}{20} = -2$ միավորի:

Ըսդհանրապես, յեթե մարմին սկզբնական արա-գությունը հավասար է V_1 , իսկ է վայրկանից հետո գառնում է V_2 , ապա այդ ժամանակվա ընթացքում մի-ջին արագացումը, վոր նշանակում են ա տառով, կլինի

$$a = \frac{V_2 - V_1}{T} \quad \dots (\text{IV})$$

Յեթե հետագա արագությունը մեծ է լինում ըս-կզբնականից, արագացումն արտահայտվում է դրական թվով, շարժումը կոչվում է արագացրած. իսկ յեթե հետագա արագությունը փոքր է լինում սկզբնականից, արագությունն արտահայտվում է բացասական թվով, շարժումն էլ կոչվում է դանդաղեցրած:

Վորովհետև արագությունը վորոշվում է վոչ միայն

իր թվական մեծությամբ, այլև ուղղությամբ, ուստի ժա-մանակի մեկ միավորի ընթացքում արագության ուղ-ղության ամեն տեսակի փոփոխությունն ընդունվում է վորպես արագացում:

Նշանակում ե՝ արագացումը չափվում է արագու-թյան մեծության և ուղղության փոփոխությամբ, վո-րը աեղի յե ունենում ժամանակի մեկ միավորի ըն-թացքում:

Արագացման հաշվումը, նրա ուղղությունը փոփո-խելիս, կարվի շրջանային շարժումը վերլուծելիս:

Այսպիսով նկատում ենք, վոր շարժվող մարմնի վրա ույժի ազդեցությունը կայանում է նրանում, վոր այդ ույժը մարմնին հաղորդում է վորու արագացու: Յեկ հակողարձ, շարժվող մարմնի արագացում ստանալը նշան է, վոր այդ մարմնի վրա ազդում է վորելի ար-տաքին ուժ:

ԱՐԱԳԱՑՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ

Արագացման համար միավորը կարելի յե դուրս բերել (V) հավասարությունից. այսպես, յեթե ընդունենք

$$V_2 - V_1 = 1 \frac{\text{cm}}{\text{sec}} \text{ և } t = 1 \text{ sec}, \text{ այն ժամանակ կունե-} \\ \text{նանք, } a = \frac{1 \frac{\text{cm}}{\text{sec}}}{1 \text{ sec}} = 1 \frac{\text{cm}}{\text{sec}^2}:$$

Աւելին, վորպես արագացման միավոր ընդունվում է այնպիսի արագացուած, վարի ժամանակ արագու-թյունն անում է ժամանակի յաւշանացյուր միավորի ընթացքում (մեկ վայրկանում) իր մեկ միավորի չափ:

CGS սիստեմի մեջ այդ միավորն առանձին անուն չունի. գործածվում է $\frac{\text{cm}}{\text{sec}^2}$ (սանտիմետր քաժանած վայր-կանի քառակուսու վրա):

Կերը բերած մեր որինակների մեջ առաջինում արագացումը $a = 7 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$, յերկրորդում՝ $a = -2 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$:

Տեխնիկական սիստեմում արագացման միավորը կոչվում է $\frac{\text{մ}}{\text{sec}^2}$:

ՑԵՐԿՐՈՐԴ ՈՐԵՆՔ ԿԱՄ ՈՒՅԹԻ ԶԱՓՄԱՆ ՈՐԵՆՔ

Մեխանիկայի մեջ յուրաքանչյուր, արտաքին պատճառ, վորը մարմնին արագություն և հաղորդում, կոչվում է ուլժ:

Վորովինետև շարժվող մարմնի կամ շարժման ընդունակ անշարժ մարմնի վրա ազդող ույժի գործողությունն արտահայտվում եւ միայն այդ մարմնին արագացում հաղորդելով, ուստի Գալիլեյն առաջարկեց ույժի մեծության մասին խոսելիս՝ նկատի առնել նրա հաղորդած արագացման մեծությունը: Ցեթեւ առաջին անգամ մարմինն ստացել եւ $5 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$ արագացում, յերկրորդ անգամ՝ $10 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$ արագացում, յերրորդ անգամ՝ $15 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$ արագացում, ապա նշանակում եւ յերկրորդ անգամ արագացում առաջացնող ույժն, յերկու անգամ մեծ եւ առաջնից, իսկ յերրորդ ույժն Յ անգամ մեծ եւ առաջնից:

Բայց վորովինետև մարմնի արագությունը կարելի յեւ հաշվել նրա անցած ճանապարհի մեծությամբ, իսկ արագացումը՝ մարմնի ստացած արագությամբ, ուստի Գալիլեյի առաջարկած ձևը, այն եւ—չափելույժը մարմնին հաղորդած արագացման մեծության միջոցով, ույժերը չափելու համար միանգամայն հարմար և ընդհանուր ձև եւ: Գալիլեյի այդ միտքն այսպես կարելի յեւ արտահայտել՝ Արտմի վրա ազդող ույժն ուղիղ համեմատական եւ նրա հաղորդած արագացմանը:

Այդ որենքը մաթեմատիկորեն կարելի յեւ արտահայտել այսպես՝ յեթե նույն մարմնի վրա f և f' ույժերն ազդելով նրան հաղորդում են ա և a' արագացումները, ապա կարելի յեւ գրել՝ $\frac{f}{f'} = \frac{a}{a'}$:

Մարմնի զանգվածը (մասսան).—վերոգրյալ քանորդական համեմատության մեջ ներքին անդամները տեղափոխելով կստանանք՝ $\frac{f}{a} = \frac{f_1}{a_1}$:

Այսպիսով նկատում ենք, վոր ամեն մի մարմնի համար ույժի և նրա հաղորդած արագացման հարաբերությունը մշտական մեծություն եւ: Սակայն այդ մեծությունը փոխվում ե, յերբ ույժն անցնում ե մի մարմնից գեպի մյուսը:

Այդպիսով, յուրաքանչյուր մարմնի վրա ազդող ույժի և նրա հաղորդած արագացման հարաբերությունը միանգամայն բնորոշ հատկություն ե այդ մարմնի համար: Հենց այդ հարաբերությունը կոչվում ե մարմնի զանգված (մասսա):

Ցեթեւ մարմնի զանգվածը նշանակենք m տառով, ապա կունենանք՝

$$\frac{f}{a} = m, \quad \boxed{f = ma} \quad \dots (\text{III})$$

Այս բանաձևը (Փորմուլան) վերջնականապես մաթեմատիկորեն արտահայտում է մեխանիկայի յերկրորդ օրենքը, վորը կարելի յեւ այսպես ձևակերպել յուրաքանչյուր ույժ չափելու և մարմնի յեվ նրան հաղորդած արագացման արտադրյալով:

Սակայն հայտնի յեւ, վոր ֆիզիկայի մեջ ավելի ցածը կուրսերում մարմնի զանգվածն այսպես են սահմանում: Մարմնի զանգվածը նրա իներտուրյան չափի և (ընդգեմ ազդող ույժի):

Այսինքն, յեթե գործ ունենանք ավելի մեծ զանգված ունեցող մարմինների հետ, կնկատենք, վոր դրանք միևնույն ույժի ազդեցության հանդեպ տվելի մեծ իներտություն են հայտնաբերում, հետեւապես մեծ զանգված ունեցող մարմինների վրա միևնույն ույժն ազդելով ավելի վորը արագացում եւ հաղորդում նրանց, վո-

րի հետևամսքով $\frac{f}{a}$ հարաբերությունն սկսում է մեծանալ:

Այսպես, յեթե 20 կց ուժին ազդելով m_1 մարմի վրա հաղորդում է 10 միավոր արագացում, ապա $\frac{f}{a}$ հավասար կլինի $\frac{20}{10} = 2$. յեթե նույն ուժին ազդելով 5 միավոր արագացում է հաղորդում, կլինի $\frac{f}{a} = \frac{20}{5} = 4$, իսկ յեթե 4 միավոր արագացում է հաղորդում, կլինի $\frac{f}{a} = \frac{20}{4} = 5$ և այլն:

Յեթե ավելի փոքր զանգված ունեցող մարմինների վրա նույն ուժին ազդելով, կնկատենք, վոր այդ մարմիններն ավելի քիչ իներտություն են հայտնաբերում ազդող ուժին հանդեպ: Հետևապես նրանց հաղորդած արագացումը՝ մեծ ե լինում, իսկ $\frac{f}{a}$ հարաբերությունն սկսում է նվազել: որինակա յեթե ազդող ուժը 20 կց ե արագացումը՝ 2 միավոր, ապա $\frac{f}{a} = \frac{20}{2} = 10$:

Յեթե արագացումը դառնում է 4 , ապա $\frac{f}{a} = \frac{20}{4} = 5$, Յեթե արագացումը հավասար է 5 -ի, կլինի $\frac{20}{5} = 4$ և այլն:

Այսպիսով զանգվածն աճելով, աճում է նաև $\frac{f}{a}$ հարաբերությունը, իսկ նրա նվազելով $\frac{f}{a}$ հարաբերությունը փոքրանում է: Սա նշանակում է, վոր զանգվածի նախկին և նոր սահմանումները միմիանց համապատասխանում են, այնպես վոր առաջինը թագնված ձեռվ պարունակում է նոր սահմանումը:

Նյուտոնը այս յերկրորդ որենքն այսպես է արտահայտում. շարժման հանակության փոփոխությունն ուղղի համեմատական և շարժող ուժին յեվ տեղի յեւնենում այն ուղիղ գծի ուղղությամբ, վորով ազդում է այդ ուժիր:

Շարժման քանակություն ասելով պետք է հասկա-

նալ արագության և զանգվածի արտադրյալը: Ազդող ուժի ասելով կարելի յեւ հասկանալ այդ ուժի իմպուլսը, այսինքն՝ ուժի և ազդման է ժամանակի արտադրյալը $f \cdot t$:

Այսպիսով յերկրորդ որենքը կարտահայտվի ու. $V = f \cdot t$ կամ $\frac{mv}{t} = f$. բայց վորովհետև $\frac{v}{t} = a$, ուստի այդ բանաձեն ել արտահայտվում է նախկինի պես ու $a = f$:

ԶԱՆԳՎԱԾԻ ՄԻԱՎՈՐԸ

Զանգվածի միավ ըը կարելի յեւ ընդունել յերկրորդ որենքից անկախ: Ֆիզիկայի մեջ $C G S$ սիստեմում, վորպես զանգվածի միավոր, ընդունվում է 1 ցր, վորը հավասար է միջազգային համաձայնությամբ ընդունված մետրական միավորի մեկ հազարյերրորդական մասին: Իսկ միավորը (վորը պահվում է Փարիզի արվարձան Սեվր քաղաքի չափ ու կշիռների պալատում), հավասար է 1 dm^3 ծավալ ունեցող Յելսիուսի ջերմաչափով 40° -ի թրած ջրի զանգվածին: Իրականում գործադրվող կիլոգրամի չափերն այդ ընտրած չափերից շատ չնշին տարբերություն ունեն (այսպես 1 կգ 1 dm^3 Յելսիուսի 40° -ի թրած ջրի զանգվածից մեծ ե՝ $0,03$ ցր): Այսպես վոր գործնական չափումների ժամանակ կարելի յեւ այդ տարբերությունն արհամարհել:

Վորովհետև զանգվածի և ուժի միավորները միևնույն անուններն են կրում, ուստի տարբերելու համար ուժի միավորի վրա դրվում է աստղ (gr^* kg^*),

ՈՒՅՑԻ ՄԻԱՎՈՐԸ-ԴԻՆ.

$f = ma$ բանաձեւ հնարավորություն է տալիս ընտրել ուժի միավորն այնպես, վոր նա կախված լինի արագացման և մասսայի միավորներից: Յեթե ընդու-

նենք $m = 1 \text{ gr}$, $a = 1 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$, այս ժամանակ կունենանք $f = 1 \text{ gr} \times 1 \frac{\text{sm}}{\text{sec}^2} = 1 \frac{\text{gr-sm}}{\text{sec}^2} = 1 \text{ դին.}$

Սա նշանակում է, որ CGS սիստեմում վորպիս ույժի միավոր ընդունվում է այն ույժը, վոր 1 gr զանգված ունեցող մարմնին հաղորդում է մեկ միավոր արագացում:

Այդ միավորը կոչվում է դին.

Տեխնիկական սիստեմում ույժի միավորը կիլոգրամն է:

ԱՐԱԳԱՑՈՒՄԸ ՅԵԿ ՈՒՅԺԸ ՎԵԿՏՈՐՆԵՐԻ ԵՆ

Դուք գիտեք, որ արագացումը վեկտոր է. իսկ մեկ միավոր ժամանակում այդ վեկտորի ըստ մեծության և ուղղության փոփոխությունը կոչվում է արագացում: Ուրեմն արագացումը նույնական բնորոշվում է իր մեծությամբ և ուղղությամբ, այսինքն՝ նա յել վեկտոր է:

Համաձայն յերկրորդ որենքի, ույժն ել վորոշվում է նրա հաղորդած արագացումով: Ուրեմն արագացման համաձայն նա յել է բնորոշվում մեծությամբ և ուղղությամբ, վորը համապատասխանում է արագացման ուղղությանը:

Նշանակում է ույժը նույնական վեկտոր են:

Այսպիսով արագացումը և ույժը գրաֆիկորեն պատկերացնելու համար գործածվում են այն յեղանակը, ինչ յեղանակով վոր արագությունն է գրաֆիկորեն պատկերացվում:

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՅԵՐՐՈՐԴ ՈՐԵՆՔԸ

Համաձայն մեխենիկայի առաջին որենքի, ինչ է հարկավոր, վորպեսզի մարմինն իր դրությունը փոխի: Ի՞նչ է կոչվում այն պատճառը, վորն առաջացնում է

այդ փոփոխությունը: Իսկ համաձայն յերկրորդ որենքի, ինչպես է չափում մարմնի վրա ազդող ույժը: Վերիշեցնեք, ձեւակերպեցնեք և գրի առեք:

Սյժմ հարց է ծագում, ինչպես է առաջանում ույժը: Այդ հարցին պատասխանել են Նյուտոնը (1643—1727թ.) իր «Մեխանիկայի յերրորդ որենք» անունով աշխատության մեջ:

Մարմնին արագացում հաղորդելու պատճառը գտնելու համար, բավական է մի ուղիղ դիմ անցկացնել նրա արագացման ուղղությամբ և շարունակել այդ ուղիղն արագացման կամ նրա հակառակ ուղղությամբ: անպայման գուք այդ շարունակության վրա կգտնեք մի մարմին, վորը նրան արագացում է հաղորդել:

Որինակ - քարի կտորը ձեւքներից ընկնում է, նա ուղղաձիգ ուղղությամբ վորոշ արագացում ստանալով ընկնում է գետին, նրա արագացման ուղղությամբ անցկացրած ուղիղ գիմ շարունակելով կհանդիպի յերկրին, վորն իր ձգողական ույժի ազգեցնությամբ նրան արագացում է հաղորդել:

Գնդակը շարժվում է հրացանի փողի մեջ և նրա արագացումն աղղված է փողի յերկարությամբ: յեթե այդ ուղղությամբ մի ուղիղ գիմ շարունակենք, կհանդիպենք այն վառողային գազերին, վորոնք նրան արագացում են հաղորդել:

Կարելի յերեկո բազմաթիվ որինակներ և հանամողին վոր մարմնի արագացման պատճառը միշտ ել այլ մարմին է հանդիսանում, վորը և զառնում է այդ արագացումը հաղորդող ույժի պատճառը:

ՀԱՐՅՑԵՐԸ

Հարթ հատակին ձեր զրորած գնդակի շարժման և արագացման պատճառը վորն է:

Ինչու համար կոր ճանապարհագծով գնացքը փոխում է իր ուղղագիծ շարժումը՝ կորագիծ շարժման:

Ի՞նչ ույժի ազգեցության ներքո մոլորակները ա-
րեգակի շուրջը գծում են կորագիծ ճանապարհներ։

Գտնել յերեք որինակ ևս ու այս հարցերի հետ
միասին բացատրել և գրի առնել տետրերում։

Այդպիսով, յեթե վորեե ույժ առաջանալով ազգում
ե տվյալ մարմնի վրա, պետք է յեղած լինի մի այլ
մարմին ևս, վորն առաջացրել և այդ ույժը, այսինքն՝
այդ յերեկութը կարող է առաջանալ միմիայն առնր-
վագն յերկու մարմինների ներկայությամբ։

Հատ նյուտոնի, այդ յերկու մարմինները միշտ ել
փոխազդում են միմիանց։ Յերեք չի կարող, վոր նը-
րանցից մեկն ազգող լինի, իսկ մյուսն ազգեցության
ընդունելիք միայն։ Նրանք յերկուն ել հավասարազոր
են, Յեթե առաջինն ազգում եյերկրորդի վրա վորոշ ույժով,
նույն ույժով ել յերկրորդն է ազգում առաջինի վրա, բայց
հակառակ ուղղությամբ։ Այդ որենքը նյուտոնի պշիտ-
ության մեջ այսպես է արտահայտվում։ «Ազիւն
համար միշտ ել զոյտքուն ունի հավասար յեվ հա-
կառակ հակազդում։ այժմին՝ յերկու մարմինների
փոխազդեցուքյունը միշտ ել հավասար է յեվ հակա-
ռակ ուղղություն ունի։ Սա հենց նյուտոնի Ո որենքն
է, վորը կաչվում է մեխանիկայի Ո որենք։»

Ի՞նչու համար, հրացան կրակելիս աշխատում եք
վորոշ դիրք ընդունել. ի՞նչ եք զգում գնդակն արձակե-
լու մոմենտին հրացանի ձեր մարմին հենման կետում։

Ի՞նչու համար թնդանոթից ուումքն արձակելու մո-
մենտին թնդանոթն ամրացրած պետք է լինի վորոշ
կայուն հենարանի վրա։ Ի՞նչն է պատճառը, վոր
արձակման մոմենտին թնդանոթը դեպի հետ է հըր-
վում։

Գտեք այդ հարցերի մեջ Ո որենքը, բացատրեցեք
գրավոր։

Յեթե միմիանց վրա փոխազդող յերկու մարմին-
ներից մեկի զանգվածը հավասար լինի ու, արագա-

ցումը՝ այ, իսկ յերկրողի զանգվածը լինի ու, արա-
գացումը՝ այ, կրենք. ազգող ույժը

$f = m_1 \cdot a_1$; $f = m_2 \cdot a_2$;

$m_1 \cdot a_1 = m_2 \cdot a_2$; $a_1 = a_2 : m_1$

Վերջին հավասարությունը ցույց է տալիս այդ
մարմինների զանգվածների և միենալուն ույժով հազոր-
դած արագացումների փոխադարձ կապը։

Դրել բառերով, թե ինչպիսի համեմատական կա-
պակցություն գոյություն ունի զանգվածի և արագաց-
ման միջև։

Պտուտակավոր նավերն իրենց պտուտակի միջո-
ցով շարժում են ջուրը կամ ողը. վերջիններս ել նույն
ույժով հակազդում են պտուտակի վրա, և շոգենավը
կամ ուսանավը շարժվում է հակառակ ուղղությամբ։

ՀԱՐՑԵՐ.

Ի՞նչու համար ուակետը վառողային գագեր արձա-
կելիս ինքը շարժվում է հակառակ ուղղությամբ։

Յերբ նավակի վրա մարդը քայլում է նրա յեր-
կարությամբ, նավակի հակառակ ուղղությամբ և շարժ-
վում։ Դանել պատճառը։

Յեթե պատահաբար շոգենավն ընդհարվի բարկասի
հետ, բարկասը կիսորտակվի, իսկ շոգենավն անմիաս տ-
ռած կինատ բացատրել այդ յերևույթը. չե վոր, համա-
ձայն յերշորդ որենքի, հավասար է հակառակ ազդե-
ցություն պիտի ունենային միմիանց վրա։ Բացատ-
րել, յենելով այ: $a_1 = a_2 : m_1$ համեմատությունից, ի՞ն-
չու համար սառցի կամ հղկված հատակի վրա քալելը
գժվար է լինում (սայթաքում են)։

Համաձայն Արքիմեդի որենքի՝

1) Հեղուկի մեջ խորասուղգած յուրաքանչյուր
մարմին իր քաշից կարցնում է այնքան, վորքան կշուռն
է նրա ծավալաչափ հեղուկը։

2) Կշեռքի վրա հավասարակշռված հեղուկի մեջ

վորեե կարծը մարմին իջեցնելիս՝ նըս հավասարակշռությունը խախտվում է այնքանով (ծանրանում է), վորքան կշռում է այդ մարմինի ծավալաչափ հեղուկը:

Ցույց տալ, թե Արքիմեդի որենքն ինչպես է կապվում նյուտոնի III. օրենքի հետ:

ԽՆԴԻԲՆԵՐ.

Քանի դին ույժով 1 գր զանգված ունեցող մարմնին կարելի յէ հաղորդել $981 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$ արագացում:

(Պատ.—981 դին):

2) Քանի դին ույժով 25 գր զանգված ունեցող մարմնին կարելի յէ հաղորդել $60 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$ (Պատ.—1500 դին):

3) Վորքան զանգվածին 981 ույժը կհաղորդել $20 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$ արագացում: (Պատ.—49 գր):

4) 9800 դին ույժով ինչպիսի արագացում կարելի յէ հաղորդել 490 գր զանգված ունեցող մարմնին:

(Պատ.—20 $\frac{\text{cm}}{\text{sec}^2}$):

5) $m_1 = 10$ գր զանգված ունելով մարմինն ազդում և $m_2 = 8$ գր զանգված ունեցող մարմնի վրա $F = 64$ դին ույժով:

Գտնել այդ մարմինների արագացումը:

(Պատ.— $a_1 = 6,4 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$; $a_2 = 8 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$):

Այս խնդիրների զբարոր լուծումներն արտագրել տեսրերում:

ՀԱՎԱՍԱՐԱԶԱՓ ՓՈՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Յեթե մարմին վրա ազդող ույժը հաստատուն է, ապա յերկրորդ որենքի համաձայն նա մարմին հաղորդում է հաստատուն արագացում:

Այն շարժումը, վորի արագացումը հաստատն

մեծություն է, կոչվում է հավասարաչափ փոփոխական շարժում:

Կամ նույն սահմանումն այսպես կարելի յէ արտահայտել:

Հավասարաչափ փոփոխական կոչվում է այն շարժումը, վորի արագությունը հավասար ժամանակամիջոցում փոխվում է հավասարաչափի:

Յեթե արագացումը դրական թիվ է, շարժումը կոչվում է հավասարաչափ արագացրած; իսկ յեթե բացասական թիվ է, կոչվում է հավասարաչափ դանդաղեցրած:

Այս շարժման արագությունը, ինչպես տեսնում եք, հակառակ հավասարաչափ շարժման, անընդհանուր փոփոխվում է, դրա համար ել այդ արագությունը չի կարելի մի այնպիսի թվով վորոշել, քորը գործադրվել շարժման ամբողջ ժամանակի ընթացքում:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր ակնթարթում նրան տալ մի վորոշ արժեք: Այդպիսի արագությունը կոչվում է ակնթարթային արագություն, կամ սկյալ մոմենտի արագություն:

Բացի ակնթարթային արագությունից, փոփոխական շարժման արագությունը ընորոշվում է նաև տրվայալ ժամանակամիջոցի միջին արագությամբ:

ՀԱՐԺԵՐ.

1) Ի՞նչպիսի արագություն ունի հավասարաչափ արագացրած շարժումը:

2) Ի՞նչպիսի արագացում ունի հավասարաչափ արագացրած շարժումը (հաստատուն թե փոփոխական):

3) Ի՞նչպիսի արագություն ունի հավասարաչափ շարժումը:

4) Ի՞նչի յէ հավասար հավասարաչափ շարժման արագացումը (ունի, $\theta = 0$):

5) Ի՞նչ նմանություն կա այդ յերկու տեսակ շարժումների միջև:

6) Ի՞նչ ատարերություն կա նրանց միջև (նշեր, թե վորի մեջ ինչն է հաստատուն և ինչն է փոփոխական):
Այս հարցերին պատասխանել գրավոր:

ԱԿՆԹԱՐԹԱՅՑԻՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

Յեթե վորեւ շողեգնացքի շարժումը նկարագրելիս առում են, թե նա այսինչ գետի կամուրջի վրայով անցավ $30 \frac{m}{sec}$ արագությամբ, ապա պետք ե այդ արագությունը վերաբերի այն մոմենտին, յերբ նա անցավ կամուրջի վրայով, իսկ դրանից առաջ և հետո յեղած մոմենտներում նա կարող եր այլ արագություն ունենալ: Յեթե ասում են հրացանից արձակված գնդակի արագությունը հավասար է $400 \frac{m}{sec}$, պետք ե հասկանար վոր նա այդ արագությունն ուներ միայն հրացանի փողից դուրս թռչելու մոմենտում, իսկ այնուհետեւ յուրաքանչյուր մոմենտի համար նա այլ արագություն կունենա:

ՀԱՐՑԵՐ.

1. Յեթե գնդակի վրա, հրացանի փողից դուրս գալուց հետո, վոչ մի ույժ չազդեր, ի՞նչպես կշարժվեր նա ոդի մեջ. արդյոք նա կպահպաներ փողից դուրս գալու մոմենտի արագությունը և ինչու:

2. Յեթե շողեգնացքը կամուրջով անցնելիս հավասարաչափ շարժվեր, կարելի յեր արդյոք այդ մոմենտի արագությամբ չափել կամ բնորոշել նաև հաջորդ մոմենտներում նրա ունեցած հավասարաչափ շարժման արագությունը:

3. Ի՞նչու համար հավասարաչափ արագացրած շարժման տվյալ մոմենտում ունեցած արագությունը վորոշվում ե այն արագությամբ, վորը նա կունենար, յեթե այդ մոմենտից սկսած նա սկսեր հավասարաչափ շարժվել:

ՄԻՋԻՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

Յեթե վորեւ շարժվող մարմին, որինակ՝ ոդանավը, ավտոն կամ գնացքը վորեւ փոփոխական շարժմամբ 100 կմ. ճանապարհն անցել է 2 ժամվա ընթացքում, ապա անցած ճանապարհի և ժամանակի տևողության քանորդը կոչվում է այդ շարժման համար՝ միջին արագություն:

1) Վարդան ճանապարհ կանցնելին այդ շարժվող մարմինները յերկու ժամվա ընթացքում, յեթե նրանք շարժվելին այնպիսի արագությամբ, վորքան նրանց միջին արագությունն ե:

2) Ի՞նչու համար փոփոխական շարժման միջին արագությունը և վյալ ժամանակամիջոցում ընդունվում է այնպիսի հավասարաչափ շարժման արագությունը, վորի անցած նաև ապա ժամանակի տեղողությունը հավասար են այդ փոփոխական շարժման անցած նաև ապա ժամանակի տեղողությանը:

ՀԱՎԱՍԱՐԱԳԱՓ ՓՈՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄԸ

Անցածից մտարերեկ թե ի՞նչպիսի մեծություն է հավասարաչափ փոփոխական շարժման և արագացումը. Արագացումն արագության վորքան ժամանակի փոփոխությունն ե:

Յեթե փոփոխական շարժման սկզբում մարմնի արագությունը հավասար է V_0 -ի, այն ժամանակ

1 վայրկյանից հետո նրա արագությունը կլինի $V_1 = V_0 + a$.

2 վայրկյանից հետո նրա արագությունը կլինի $V_2 = V_0 + a + a = 2a$.

3 վայրկյանից հետո նրա արագությունը կլինի $V_3 = V_0 + 2a + a = 3a$.

4 վարկյանից հետո նրա արագությունը կլինի

$$V_t = V_0 + 3a + a = 4a$$

և վարկյանից հետո նրա արագությունը կլինի

$$V_t = V_0 + at \dots$$

Ահա այդ բանաձեկի միջոցով կարելի յե փորոշել նրա լուրաքանչյուր մոմենտի արագությունը:

Գտնել ընկնող քարի արագությունները 2, 3, 5, 10, 15 վարկյաններից հետո, յեթե նրա սկզբնական արագությունը հավասար է մոտավորապես 5 մետրի, իսկ արագացումը հավասար է մոտավորապես 10 մետրի:

Վորդեսզի կարողանանք արտածել հավասարաչափ ժամանակամիջոցում անցած փոփոխական շարժման ճանապարհի բանաձել, պետք է հիշենք, վոր այդ ճանապարհը հավասար է նույն ժամանակամիջոցում հավասարաչափ շարժմամբ անցած ճանապարհն, յեթե նրա արագությունը հավասար է փոփոխական շարժման միջին արագությանը:

Սկզբնական արագությունն ընդունելով V_0 , իսկ ժամանակամիջոցից հետո յեղած արագությունը V , միջին արագությունը կլինի $\frac{V_0 + V}{2}$, իսկ ժամանակամիջոցում անցած ճանապարհը կլինի՝

$$S = \frac{V_0 + V}{2} \cdot t:$$

Յեթե V -ի փոփոխեն դնենք նրա $V_0 + at$ արժեքը, կլինի՝

$$S = \frac{V_0 + V_0 + at}{2} \cdot t = \frac{2V_0 + at}{2} \cdot t = \frac{2V_0 \cdot t + at^2}{2} =$$

$$\frac{2V_0 \cdot t}{2} + \frac{at^2}{2} = V_0 t + \frac{at^2}{2}:$$

Այսպիսով հավասարամշափ փոփոխական շարժման

համար կունենանք հետևյալ հավասարութիւնը՝

$$a = \text{հաստատում մեծության}.$$

$$V = V_0 + at$$

$$S = V_0 t + \frac{at^2}{2}$$

... (IV)

Ինչպես տեսնում ենք, հավասարաչափ փոփոխական շարժումը բնորոշվում է a, V_0, V, t, S հինգ մեծություններով, վորոնք կապված են միմիանց հետ (IV) հավասարութիւնը միջոցով: Դրանց վերաբերյալ խնդիրներ լուծելիս պետք է յերեք մեծությունները տրված լինեն, վորպեսզի կարողանանք գտնել մասցած յերկուսը: Այդ յերեք մեծությունները խնդիրների մեջ կարող են արված լինել տասը ձևերով, ուստի սրանց վերաբերյալ կարելի յե լուծել 10 տեսակի հիմնական խնդիրներ:

Դիտենք սրանցից մի քանիսը.

1 որինակ, — Գնագըլը հորիզոնական ուղղությամբ 36 կմ $\frac{\text{ժամ}}{\text{ժամ}}$ արագությամբ հավասարաչափ շարժվելով, փոխեց իր շարժումը հավասարաչափ փոփոխականի և անցավ 600 մետր ճանապարհ, վերջնական արագությունը հասցնելով 45 $\frac{\text{կմ}}{\text{ժամ}}$ ՝ իւ.

Գտնել նրա արագացումն ու հավասարաչափ արագացրած շարժման ժամանակը:

Ուրեմն արված են.

$$V_0 = 36 \frac{\text{կմ}}{\text{ժամ}} = \frac{36000 \text{m}}{3600 \text{sec}} = 10 \frac{\text{m}}{\text{sec}}$$

$$V = 45 \frac{\text{կմ}}{\text{ժամ}} = \frac{45000 \text{m}}{3600 \text{sec}} = 12,5 \frac{\text{m}}{\text{sec}}$$

$$S = 600 \text{ m.}$$

Պետք է գտնել
առ և իւ:

Տրված մեծությունները դնելով այդ շարժման
բանաձևերի մեջ, կունհսանք՝

$$ա) \quad 12,5 = 10 + at; \quad p) \quad 600 = 10t + \frac{at^2}{2}; \quad ա) - ից$$

կորենք $at = 12,5 - 10 = 2,5$, վորտեղից $a = \frac{2,5}{t} : a - ի այս
արժեքը աեղադրելով (ը) -ի հավասարման մեջ, կունհ-
սանք՝ $600 = 10t + \frac{2,5 \cdot t^2}{2t}$:$

Վերջին կոսորտակի համարիչը բաժանելով հայտա-
րարի վրա, կինդ՝ $600 = 10t + 1,25t$, կամ $600 = 11,25t$,
վորտեղից $t = \frac{600}{11,25} = \frac{60000}{1125} = 53$ sec:

(1-ի մոտ ճշտությամբ) 53-ը աեղադրելով
 $a = \frac{2,5}{t} \cdot հավասարման մեջ, կինդ՝$

$$a = \frac{2,5m}{53sec^2} = \frac{250cm}{53sec^2} = 4,7 \frac{cm}{sec^2}$$

(0,1-ի մոտավոր ճշտությամբ):

2 որինակ, — Գնացքը $18 \frac{m}{sec}$ արագությամբ հավասա-
րաչափ շարժվելով, սկսեց վեր բարձրանալ և 1 բազե-
յից հետո նրա արագությունը գտրձավ $10 \frac{m}{sec}$:

Գտնել գնացքի արագությունը և վեր բարձրա-
նալու ձանապարհը:

Տրված են՝

$$V_0 = 18 \frac{m}{sec}$$

$$V = 10 \frac{m}{sec}$$

$$t = 60sec$$

Գնացքի՝

A և S:

Ուսովելով բանաձևերից, կդրենք.

$$10 = 18 + a \cdot 60; \quad S = 18 \cdot 60 + \frac{a \cdot 60^2}{2}$$

$$a \cdot 60 = 10 - 18; \quad a = \frac{10 - 18}{60} = \frac{8cm}{60sec^2} =$$

$$= \frac{800cm}{60sec^2} = 13,3 \frac{cm}{sec^2}:$$

$$S = 18 \cdot 60 + \left(- \frac{8 \cdot 60^2}{60 \cdot 2} \right) = 18 \cdot 60 - \frac{8 \cdot 60^2}{60 \cdot 2} = \\ = 18 \cdot 60 - 4 \cdot 60 = 14 \cdot 60 = 840m:$$

ՍԿՃՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆԵՑՈՂ ՀԱՎԱՍԱՐԱԳԱՓ
ԱՐԱԴԱՑՐԱԾ ՇԱՐԺՈՒԽՄ

Շատ հաճախ գործ ենք ունենում այնպիսի շար-
ժումների հետ, վորոնք նոր են սկսում տեղի ունենալ
որինակ՝ մեկնող նավի շարժումը, ընկնող քարի շար-
շումը և այլն, վորոնք, ինչպես տեսնում ենք, գուրկ են
ոկզրնական արագությունից:

$$այսինքն՝ V_0 = 0; V = at; s = \frac{at^2}{2},$$

Այսպիսի շարժումների համար հեշտությամբ կա-
րելի յե գտնել վերջնական արագությունը, յեթե ան-
ցած ձանապարհը արված լինի:

$$Այսպես. \quad V = at, \quad ուստի \quad t = \frac{V}{a}, \quad ապա \quad s = \frac{a}{2} \left(\frac{V}{a} \right)^2 = \frac{aV^2}{2a} = \frac{V^2}{2a}, \quad այսինքն \quad s = \frac{V^2}{2a}, \quad կամ \quad V^2 = 2as \quad և \quad V = \sqrt{2as}:$$

Այսպիսով 0 սկզբնական արագություն ունեցող
հավասարաչափ արագացքած շարժման համար կունե-
նանք հետևյալ բանաձևերը.

$$a = հաստատուն մեծության.$$

$$V = at$$

$$S = \frac{at^2}{2}$$

$$V^2 = 2as,$$

... (V)

Կատարել հետեւյալ վարժությունները՝

1) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot a = S \frac{\text{cm}}{\text{sec}^2}, V_0 = 10 \frac{\text{cm}}{\text{sec}}, t = 20 \text{ sec}$:
Գտնել V և S :

(Պատ. — $110 \frac{\text{cm}}{\text{sec}}$, 12 m):

2) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot a = 6 \frac{\text{cm}}{\text{sec}^2}, V_0 = 20 \frac{\text{cm}}{\text{sec}}, V = 80 \frac{\text{cm}}{\text{sec}}$:
Գտնել t և S :

(Պատ. 10 sec , 5 m):

3) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot a = 10 \frac{\text{cm}}{\text{sec}^2}, V = 60 \frac{\text{cm}}{\text{sec}}, t = 5 \text{ sec}$:
Գտնել V_0 և S :

(Պատ. $10 \frac{\text{cm}}{\text{sec}}$, 175 cm):

4) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot a = -4 \frac{\text{cm}}{\text{sec}}, V_0 = 100 \frac{\text{cm}}{\text{sec}}, S = 962 \text{ cm}$:
Գտնել t և V :

(Պատ. — 13 sec , $48 \frac{\text{cm}}{\text{sec}}$):

5) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot a = -3 \frac{\text{cm}}{\text{sec}^2}, t = 12 \text{ sec}, S = 3 \text{ m}$:
Գտնել V_0 և V :

(Պատ. $43 \frac{\text{cm}}{\text{sec}}$, $7 \frac{\text{cm}}{\text{sec}}$):

6) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot V_0 = 3 \frac{\text{cm}}{\text{sec}}, V = 45 \frac{\text{cm}}{\text{sec}}, t = 6 \text{ sec}$:
Գտնել a և S :

(Պատ. $7 \frac{\text{cm}}{\text{sec}}$, 144 cm):

7) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot V_0 = 12 \frac{\text{cm}}{\text{sec}}, t = 10 \text{ sec}, S = 10 \text{ m}$:
Գտնել a և V :

(Պատ. $17,6 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$, $188 \frac{\text{cm}}{\text{sec}}$):

8) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot V_0 = 125 \frac{\text{cm}}{\text{sec}}, V = 5 \frac{\text{cm}}{\text{sec}}, S = 1000 \text{ cm}$:
Գտնել a և t :

(Պատ. $a = -8 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$, մոտավորապես 15 sec):

9) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot a = 8 \frac{\text{cm}}{\text{sec}^2}, V = 25 \frac{\text{m}}{\text{sec}}, S = 500 \text{ m}$:

Գտնել V_0 և t :

(Պատ. $մոտ.$ 20 sec)

10) $S_{\text{ըլված}} \cdot t' \cdot V = 12 \frac{\text{m}}{\text{sec}}, t = 2 \text{ քողեցի}, S = 1 \text{ km}$:
Գտնել a և V_0 :

(Պատ. $6,1 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$, $468 \frac{\text{cm}}{\text{sec}}$):

Լուծել հետեւյալ խնդիրները

1) Կայարանից 1 կմ . հեռավորության վրա
 $72 \frac{\text{կմ}}{\text{ժամ}}$ արագություն ունեցող շոգենավի մեջ շոգու
մուտքը փակեցին:

Գտնել նրա մինչև կայարանը հասնելու հավասարաչափ գանցաղեցրած շարժման ժամանակը և միջին արագությունը,

(Պատ. $100 \text{ sec} = 0,2 \frac{\text{m}}{\text{sec}^2}$):

2) Կայարանից դուրս յեկող գնացքը հավասարաչափ արագացրած շարժվելով, 600 m անցնելուց հետո ստացավ $45 \frac{\text{կմ}}{\text{ժամ}}$ — ի արագություն:

Գտնել այդ ճանապարհն անցնելու ժամանակը և արագացումը:

(Պատ. $96 \text{ sec}, 13 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$):

3) Կայարան հասնելուց 15 վայրկյան առաջ
 $54 \frac{\text{կմ}}{\text{ժամ}}$ արագություն ունեցող գնացքի շոգու մուտքը
շոգեգլանի մեջ դադարեցրին:

Գտնել մինչև կայարան անցած ճանապարհը և միջին արագացումը:

(Պատ. $112,5 \text{ m.}, -1 \frac{\text{m}}{\text{sec}^2}$):

4) Կայարանից մեկնող գնացքը 20 վայրէյանից
հետո ստացավ $36 \frac{\text{կմ}}{\text{ժամ}}$ արագություն:

Դժնել նրա անցած ճանապարհն ու արագացումը:
(Պահ. 100 մ., $\frac{0.5 \text{ մ}}{\text{sec}^2}$):

5) Հրացանի փողի յերկարությունը հավասար է
1,2 մ: Նրանից արձակված գնդակի արագությունը
 $880 \frac{\text{մ}}{\text{sec}}$ է:

Դժնել գնդակի շարժման արագացումը և ժամանակը փողի մեջ, հաշվելով նրա շարժումը հավասարաչափ արագացրած:

6) Գծել $a = 3 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$ և $V_0 = 0$ շարժման արագացման արագության և ճանապարհի գրաֆիկները:

7) Գծել $a = 2 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$, $V_0 = 3 \frac{\text{cm}}{\text{sec}}$ շարժման և
 $a = -2 \frac{\text{cm}}{\text{sec}^2}$, $V_0 = 20 \frac{\text{cm}}{\text{sec}}$ շարժման գրաֆիկները:

Դրավոր պատասխանել հետևյալ հարցերին.

1) Ի՞նչ է վեկտորը.

2) Մեխանիկայի մեջ վեր մեծություններն են
վեկտորներ.

3) Կորագիծ շարժման արագությունն ի՞նչ ուղղություն ունի.

4) Ինչնի չափվում միջին արագացումը.

5) Վերն է արագացման միավորը.

6) Փոփոխական շարժման մեջ ի՞նչ է ակնթարթակին արագությունը և ի՞նչ է միջին արագությունը.

7) Գրել հավասարաչափ արագացրած շարժման հավասարումները.

8) Գրել հավասարաչափ դանդաղեցրած շարժման հավասարումները.

9) Գրել հավասարաչափ արագացրած շարժման համարումները, յեթե սկզբնական արագությունը $V_0 = 0$.

10) Ինչնի են տարրերվում միմիանցից այդ հավառարումները.

11) Վերն ե շարժման լորենքը.

12) Ի՞նչ ե ույժը և ինչպես ե զգացվում նրա ազդեցությունը.

13) Վերն ե շարժման լորենքը.

14) Ի՞նչ ե զանգվածը.

15) Վերն ե մասսայի միավորը.

16) Վերն ե ույժի միավորը.

17) Վերն ե շարժման լորենքը.



«Ազգային գրադարան



NL0259702

Ответственный редактор
А. Г. Азакян
Технический редактор
Ф. Т. Чичиков

№ 2415

Сд. в набор 19 IV—1932 г.
Сд. в печать 1 VI—1932
Об'ем 1 1/4 листа
Тираж 1100 экз

В

Уполномоченного № 1426. Газ.-жн. тип. СККПО. Статформат Б6 125.Х176 Заказ № 127
Гор. Ростов на Дону.

СА 55

22.9.82.

1
2



На армянском языке

ФИЗИКА

задание №2

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԴՐԱԳԱՀԵԱՑԸ

ԹՈԽՈՎԿ-ԴՊՆ, ՄՈՍԿՎԻԿԱՅԱ ՓՈՂ, 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ՎԵՐԱԳՐԱԿԱՆ)